«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ	Կրակային պատրաստությունը հանրակրթական դպրոցներում
ԱՌԱՐԿԱ	«Նախնական զինվորական պատրաստություն»
ՀԵՂԻՆԱԿ	Սեյրան Ավագյան
ՄԱՐԶ	Կոտայք
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ	Հրազդանի թիվ 2 հիմնական դպրոց

Բովանդակություն

Ներածություն----------3

Գլուխ 1----------4

Գլուխ 2----------5

Եզրակացություն----------17

Օգտագործված գրականություն----------19

Հավելված----------20

Հայրենիքներն ապրում են հայրենասիրությամբ, կործանվում դրա պակասի պատճառով: Հայրենապաշտական դաստիարակություն. ահա՛ մեր փրկության խարիսխը:

Գարեգին Նժդեհ

Ներածություն

Ռազմական գործը և զինվորական պատրաստությունը մարդկության պատմության ձևավորման հետ միասին սկսել է գոյություն ունենալ, իսկ «Նախնական զինվորական պատրաստություն»-ը, որպես առարկա մեր իրականաության մեջ կյանքի է կոչվել 20-րդ դարի սկզբներին: Այն հնարավորություն է տալիս ձևավորելու մտածող, քաջ և հայրենիքի պաշտպանությանը պատրաստ քաղաքացի:

Հետազոտության նպատակը

- Ձևավորել զինվորական պատրաստության հիմունքերից նվազագույն գիտելիքներ տիրապետող, արդիական գիտելիքների, գործնական կարողությունների ու հմտությունների միջոցով՝ արտակարգ իրավիճակներում կենսապահովում իրականացնող, հասարակական բարձր գիտակցություն, բարոյահոգեբանական որակներ և վարքային դրսևորումներ ունեցող անձ ։
- Սովորեցնե՛լ, ո՞րն է մարտական պատրաստության գործընթացում կրակային պատրաստության դերն ու տեղը: Զենքի հետ վարվելու անվտանգության կանոնները:
- Ծանոթացնե՛լ, զինվորի անհատական զենքի տարբեր տեսակներին: Գաղափար տալ դրանց մարտական հատկությունների մասին:

Հետազոտության վերջնարդյունքը

- Սովորողը իմանա՛ կրակային պատրաստության խնդիրները, զենքի հետ վարվելու անվտանգության կանոնները, ինքնաձիգի տեսակները, դրանից մարտական հատկությունները հիմնական մասերը:

Գլուխ1-Կրակային պատրաստության դասավանդման առանձնահատկությունների հետազոտություն

Մարտական պատրաստության գործընթացում կարևորագույն դեր ունի կրակային պատրաստությունը:Առաջնահերթ է զենքի նյութական մասի ուսուցումը, որի շրջանակներում ուսումնասիրվում է ոչ միայն զենքի մարտական հատկությունները, մասերն ու մեխանիզմների կառուցվածքը, դրանց նշանակությունը, այլև ցույց է տրվում զենքի խնամքի, պահպանման և մարտում դրա անխափան օգտագործման կարևորությունը:Կրակային պատրաստության անբաժանելի մաս է կազմում հրաձգության հիմունքների ու կանոնների յուրացումը, քանի որ միայն այդ դեպքում մարտի ժամանակ հնարավոր կլինի զենքը գրագետ օգտագործել: Հրաձգության ձևերի ու կանոնների ուսումնասիրությունն անհրաժեշտ է տեղանքի, եղանակի, օրվա ու տարվա այլևայլ պայմաններում, տարբեր տարածություններից և դիրքերից հակառակորդի միայնակ կամ խմբային նշանակետերը դիպուկ կրակով ոչնչացնելու համար:Կրակային պատրաստության բաղկացուցիչ մաս է կազմում ձեռքի նռնակների նետման ուսուցումը, որի նպատակն է սովորեցնել դրանք անվրեպ նետել մարտական իրադրության տարբեր պայմաններում (հատկապես հակառակորդի հետ մոտիկից շփվելիս) և տարբեր դիրքերից:

(1)Մարտական պատրաստության կարևորագույն մասերից մեկը, անձնակազմի ուսուցման համակարգ՝ հաստիքային զենքի կիրառման գիտելիքների և հմտությունների յուրացման ու կատարելագործման նպատակով: Այս բաժինը ընդգրկում է հիմնականում զենքի հիմնական մասերի, հրաձգության հիմունքների, ձևերի ու կանոնների, մարտի դաշտի հեռավորության որոշման նռնակի հետ գործողությունների կատարման ինչպես նաև հրաձգության վարժությունների կատարման հիմունքները: Կարևոր նշանակություն ունի նաև ինքնաձիգի կամ որևէ մարտական զենքի պահպանությունը, խնամքը և մի շարք այլ գործողություններ: Հրաձգության կանոնների իմացությունն ամենակարևոր պայմաններից է մարտի դաշտում: Կրակային պատրաստության մակարդակի չափանիշը հակառակորդի առաջին իսկ կրակոցով ոչնչացնելու ունակությունն է:

1.https://hy.wikipedia.org/wiki/%D4%BF%D6%80%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B5%D5%AB%D5%B6_%D5%BA%D5%A1%D5%BF%D6%80%D5%A1%D5%BD%D5%BF%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6

Գլուխ-2 Անվտանգության կանոնները կրակային պատրաստության

(2)Անվտանգության կանոնները `

Պարապմունքի ժամանակ

- Պարապմունքից առաջ ղեկավարի հրամանով կամ ինքնուրույն ստուգել լիցքը
- Կտրականապես արգելվում է զենքն ուղղել մարդկանց ուղղությամբ
- քանդել-հավաքելու ժամանակ պահպանել 2 մետր հեռավորությունը

Հրաձգության ժամանակ

- հրաձգարանից հեռացնել շնչավոր էակներին
- Զենքը թույլատրվում է լիցքավորել միայն ԿՐԱ՛Կ հրամանից հետո
- Կրակի դադարեցման գծում լիցքաթափե՛լ զենքը

Արգելվում է կրակ վարել՝

- այն ուղղությամբ որտեղ վտանգ կա
- Արգելվում է կրակել ԴԱԴԱ՛Ր հրամանից հետո
- մինչև կրակի վարման սահմանագծից դուրս գալը
- անսարք զենքով

Կրակն անմիջապես դադարեցվում է՝

- թիրախային դաշտում մարդկանց կամ կենդանիների հայտնվելու պահին
- սպիտակ դրոշի բարձրացման ժամանակ

Եթե հակառակորդը ոչնչացվում է առաջին իսկ կրակոցով, նշանակում է կրակային պատրաստականության մակարդակը գերազանց է, քանի որ հենց այս կերպ էլ որոշում ենք կրակային պատրաստականության մակարդակի չափանիշը:

Նզպ առարկայի չափորոշչում սովորողներից պահանջվում են հետևյալ վերջնարդյունքները կրակային պատրաստությունից՝

Գիտեն փոքր տրամաչափի (օդամղիչ) հրացանի կառուցվածքը, դրա մեխանիզմի աշխատանքը, նշան բռնելու տեխնիկան: Կարող են պառկած դիրքավորմամբ ֆիքսել փոքր տրամաչափի (օդամղիչ) հրացանը և նշանառու կրակ վարել (նորմեր):

Գիտեն ՀՀ ԶՈՒ-ում կիրառվող հրաձգային զենքի հիմնական տեսակները՝ տալով դրանց նշանակությունը:

Գիտեն ԱԿՄ (ԱԿ-74) ինքնաձիգի մասերի ու մեխանիզմների նշանակությունն ու աշխատանքը, պահպանման և անվտանգության կանոնները:

Կարող են ըստ նորմատիվների ինքնաձիգը ոչ լրիվ քանդել-հավաքել:

Գիտեն կրակոցի երևույթը և պատսպարված, խոցելի և «մեռյալ» տեղամասերը:

Որոշակի տիրապետում են նշանառության միատեսակության ապահովման հմտություններին:

Գիտեն ստուգել և վերացնել ինքնաձիգի խափանումները տեղում: Գիտեն փամփշտատուփում վերջին փամփուշտի մնալը ահազանգելու ձևը և կարող են արագ փոփոխել այն՝ առանց ինքնաձիգը վերալիցքավորելու: Գիտեն ձեռքի բեկորային Ֆ-1, РГД-5, Ջ-1 նռնակների յուրաքանչյուրի նշանակությունը, ծանոթ են դրանց իրանի և բոցավառիչի ներքին կառուցվածքին և աշխատանքնին, կարող են ներկայացնել դրանց մարտավարական-տեխնիկական պարամետրերը, կարող են ցուցադրել դրանց անվտանգության 5 մակարդակները: Կարողանում են տեղում կանգնած դրությունից ձեռքի ուսումնական բեկորային նռնակը ճիշտ նետել:

Կարողանալ տարբերել դիվերսիոն հետախուզական խմբերի հնարավորությունները և մոբիլ ջոկատների ունեցած հնարավորություններից: Գիտեն հաշվարկել ԱԿՄ, ԱԿ-74 ինքնաձիգներից նշանառության ճշգրտումները հակառակորդի տեղաշարժի և կողային քամու դեպքում:Կարող են որոշել նշանակետի հեռավորությունը, ինչպես նաև քամու շարժման արագությունն ու ուղղությունը:

Գիտեն Տունգուսկա, ՏՈՐ-Մ2, ԲՈՒԿ հակաօդային պաշտպանության զենիթահրթիռային համալիրների հնարավորությունների , ՍՄԵՐՉ, ՏՈՍ-1Ա համազարկային հրետանային համակարգերի հնարավորությունների, ՏՈՉԿԱ-ՈՒ, ԻԿԱՆԴԵՐ- Է, օպերատիվ մարտավարական հրթիռային և Ս-300 համազարկային հրետանային համակարգերի մասին:

2.https://fliphtml5.com/fumf/zdpv

Գլուխ2-Կրակային պատրաստության պարապմունքների արդյունավետ անցկացումը հիմնական դպրոցում:

Կրակային պատրաստության պարապմունքների անցկացումը դպրոցում արդյունավետ է անցկացնել հետևյալ սխեմայով՝

Թեմա 3.1.
Մարտական իրավիճակին համապատասխան հրաձգային դիրքավորում (4 ժամ)
Նպատակը
Մարտական իրավիճակում հմտորեն տիրապետել զենքին, արագ գալ պահանջվող մարտական դիրքավորման: Հրաձգության մի կայուն դիրքավորումից հմտորեն անցնել մեկ այլ դիրքավորման՝ կախված մարտական իրավիճակից:
Վերջնարդյունքները
Գիտեն մարտական պայմաններում ինքնաձիգը կրելու առանձնահատկությունները և տիրապետում են դրա հիմնական ձևերին: Հմտորեն իրականացնում են անցում ինքնաձիգով կանգնած նախամարտական դիրքավորումից մարտական դիրքավորման: Կարողանում են հմտորեն հրաձգության մի դիրքավորումից անցնել մեկ այլ դիրքավորման:
Բովանդակությունը
Մարտական պայմաններում ինքնաձիգի դիրքը: Ինքնաձիգով նախամարտական դիրքավորումից անցում մարտական դիրքավորման: Անցում կանգնած դիրքավորումից ծնկած դիրքավորման: Անցում կանգնած դիրքավորումից պառկած դիրքավորման:

Անցում ծնկած դիրքավորումից պառկած դիրքավորման։ Անցում ծնկած և պառկած դիրքավորումից կանգնած դիրքավորման։

Գործնական աշխատանքներ	Ընդհանրական գաղափարներ
Ուսումնասիրել համապատասխան տեսադասերը։ Անցկացնում են գործնական վարժանքներ տվյալ թեմայով։ Վարժանքները սկզբում անել առանց զենքի, հետո միայն զենքով (դրա նմանակիչով)։	Կարողություն, հմտություն, Անվտանգություն, պաշտպանվածություն։
Միջառարկայական կապեր	
Հայոց լեզու։ Կարողանան նյութը ընկալել, յուրացնել։ Ֆիզկուլտուրա։ Նախավարժանք։ Աշակերտների ֆիզիկական որակների զարգացում. ուժ, արագություն, ճկնություն, դիմացկունություն, շարժումների կոորդինացիա, հավասարակշռության զգացողություն։ Կենսաբանություն։ Մարմնի անատոմիան. հենաշարժիչ, մկանաջլային, շնչառական համակարգեր։ Հավասարկշռության և շարժումների կոորդինացիայի կենտրոններ (ներքին ականջ, ուղեղիկ)։ Ֆիզիկա։ Հավասարակշռություն, շարժումների կոորդինացիա։ Կայունություն, ծանրության կենտրոն։ Իներցիա։ Պտտական շարժում։ Ուժի բազուկ։	
Կապը Հանրակրթության Չափորոշչի Միջին Դպրոցի Վերջնարդյունքների հետ	
1,9,33,34,49,52	
Հրաձգության սեկտորի փոփոխումը կայուն դիրքավորումներում (1 ժամ)	

Նպատակը
Մարտական իրավիճակում պահովել սեփական անվտանգությունը և իրականացնել մարտական խնդիրը մարտադաշտի տվյալ տեղամասում։ Մարմնի հմուտ շարժումով փոխել հրաձգության սեկտորը տարբեր դիրքավորումներում՝ կախված մարտական իրավիճակից։
Վերջնարդյունքները
Ցուցադրում են հմտություններ՝ մարմնի դիրքը արագ փոխելու ուղղությամբ։ Կարողանում են ինքնաբերաբար փոխել հրաձգության սեկտորը կանգնած և ծնկած դիրքավորման ժամանակ տարբեր ուղղություններով՝ կախված հրահանգչի (զինղեկի) հրահանգից։
Բովանդակությունը
Հրաձգության սեկտորի փոփոխումը կանգնած դիրքավորման ժամանակ (աջ, ձախ, հետ)։ Հրաձգության սեկտորի փոփոխումը ծնկած դիրքավորման ժամանակ (աջ, ձախ, հետ)։

Գործնական աշխատանքներ	Ընդհանրական գաղափարներ
Ուսումնասիրել համապատասխան տեսադասերը։ Անցկացնում են գործնական վարժանքներ տվյալ թեմայով՝ յուրացնելով դրանք մինչև հմտություն։ Վարժանքը սկզբում անել առանց զենքի, հետո միայն զենքով (դրա նմանակիչով)։	Սեկտոր, Դիրքավորում, Կարողություն, հմտություն, Անվտանգություն, պաշտպանվածություն։
Միջառարկայական կապեր	
Հայոց լեզու։ Կարողանան նյութը ընկալել, յուրացնել։ Ֆիզկուլտուրա։ Նախավարժանք։ Աշակերտների ֆիզիկական որակների զարգացում. ուժ,	

արագություն, ճկնություն, դիմացկունություն, շարժումների կոորդինացիա, հավասարակշռության զգացողություն։ Կենսաբանություն։ Մարմնի անատոմիան. հենաշարժիչ, մկանաջլային, շնչառական համակարգեր։ Հավասարկշռության և շարժումների կոորդինացիայի կենտրոններ (ներքին ականջ, ուղեղիկ)։ Ֆիզիկա։ Հավասարակշռություն, շարժումների կոորդինացիա։ Կայունություն, ծանրության կենտրոն։ Իներցիա։ Պտտական շարժում։ Ուժի բազուկ։ Անկյունային արագացում։
Կապը Հանրակրթության Չափորոշչի Միջին Դպրոցի Վերջնարդյունքների հետ
1,9,33,34,49,52
ԹԵՄԱ 4.1
Հրաձիգի հիմնական զենքը (7 ժամ)
Նպատակը
Պատկերացնել կրակոցի երևույթը։ Իմանալ ՀՀ ԶՈՒ-ում հրաձիգի հիմնական զենքի՝ ԱԿՄ (ԱԿ-74) ինքնաձիգի հիմնական մարտավարական-տեխնիկական բնութագրերը, կառուցվածքը, պահպանման կանոնները, հրաձգության առանձնահատկությունները։ Տիրապետել նշանառության կանոններին։ Ձեռք բերել ինքնաձիգից կրակ վարելու գործողությունների որոշակի հմտություններ։ Իմանալ ինքնաձիգի փամփուշտների կառուցվածքը, ըստ նշանակության դրա հիմնական տիպերը, կարողանալ լիցքավորել և լիցքաթափել փամփշտատուփը։ Հստակ տիրապետել մարտի դաշտում զենքի հետ վարման անվտանգության կանոններին։
Վերջնարդյունքները
Կարող են թվարկել ՀՀ ԶՈՒ-ում կիրառվող հրաձգային զենքի հիմնական տեսակները՝ տալով դրանց նշանակությունը։ Գիտեն ԱԿՄ (ԱԿ-74) ինքնաձիգի մասերի ու մեխանիզմների նշանակությունն ու աշխատանքը, դրա հիմնական մարտավարական-տեխնիկական բնութագրերը, գիտեն դրա

պահպանման կանոնները: Գիտեն ինքնաձիգի հետ վարվելու անվտանգության կանոնները: Կարող են ըստ նորմատիվների ինքնաձիգը ոչ լրիվ քանդել-հավաքել: Գիտեն ինքնաձիգի փամփուշտների ընդհանուր կառուցվածքը և հիմնական տիպերը: Կարող են ինքնաձիգի փամփշտատուփը քանդել-հավաքել, այն լիցքավորել ու լիցքաթափել: Պատկերացնում են կրակոցի երևույթը: Գիտեն ինչ է <ուղիղ կրակոցը>, պատսպարված, խոցելի և «մեռյալ» տեղամասերը: Որոշակի տիրապետում են նշանառության միատեսակության ապահովման հմտություններին:
Բովանդակությունը
ՀՀ ԶՈՒ-ում կիրառվող ինքնաձիգների տեսակները, դրանց մարտավարական-տեխնիկական բնութագրերը: ԱԚՄ (ԱԚ-74) ինքնաձիգի մասերի ու մեխանիզմների նշանակությունն ու աշխատանքը: Ինքնաձիգի հետ վարվելու անվտանգության կանոնները: ԱԚՄ (ԱԚ-74) ինքնաձիգի ոչ լրիվ քանդելն ու հավաքելը: Ինքնաձիգի մաքրումը և պահպանումը: Հրաձգային զենքի փամփուշտների ընդհանուր կառուցվածքը և հիմնական տիպերը: Ինքնաձիգի փամփշտատուփի քանդելն ու հավաքելը, լիցքավորելն ու լիցքաթափելը (գործնական վարժանքներ): Կրակոցի երևույթը. ներքին և արտաքին բալիստիկա: Հետհարված: Ուղիղ կրակոց: Պատսպարված, խոցելի և «մեռյալ» տարածություններ: ինքնաձիգից կրակ վարելու եղանակները և միօրինակ նշանառման հմտությունների զարգացումը:

Գործնական աշխատանքներ	Ընդհանրական

	գաղափարներ
Ինքնաձիգը ոչ լիվ քանդել-հավաքել ըստ նորմատիվների։ Փամփշտատուփը քանդել-հավաքել, լիցքավորել-լիցքաթափել ըստ նորմատիվների։	Պատկերացումներ-գիտելիքներ-կարողություններ-հմտություններ, Անվտանգություն։
Միջառարկայական կապեր	
Ֆիզկուլտուրա։ Ֆիզիկական որակներ՝ ուժ, արագություն, ճկնություն, դիմացկունություն, հավասարակշռության զգացողություն և շարժումների կոորդինացիա։ նախավարժանք, ճիշտ (<փորով>) շնչառություն, շնչառական վարժանքներ։ Կենսաբանություն։ Մարմնակազմություն՝ հենաշարժողական համակարգ, մկանային համակարգ, ջլեր։ Շնչառական համակարգ, շնչառություն ստոծանիով (<փորով>)։ Հավասարակշռության և շարժումների կոորդինացիան կազմակերպող օրգաններ. ներքին ականջ և ուղեղիկ։ Ֆիզիկա։ Հավասարակշռություն, ծանրության կենտրոն, կայունություն, պտտական շարժում, պտտման առանցք, գլորում, իներցիա, հետհարված։	
Կապը Հանրակրթության Չափորոշչի Միջին Դպրոցի Վերջնարդյունքների հետ	
1,3,4,6,9,10,28,30,33,48,49,52	
ԹԵՄԱ 4.1	
Հրաձգություն ինքնաձիգից (5 ժամ)	
Նպատակը	

Տիրապետել հրաձգության կանոններին։ Իմանալ ինքնաձիգի հնարավոր խափանումները հրաձգության ժամանակ և կարողանալ դրանք վերացնել տեղում։ Կանխավ իմանալ փամփշտատուփում վերջին փամփուշտի մնալը, արագ փոփոխել այն և շարունակել հրաձգությունը՝ առանց փակաղակը քաշելու և ինքնաձիգը վերալիցքավորելու։
Վերջնարդյունքները
Տիրապետում են հրաձգության կանոններին։ Գիտեն ստուգել և վերացնել ինքնաձիգի խափանումները տեղում։ Գիտեն փամփշտատուփում վերջին փամփուշտի մնալը ահազանգելու ձևը և կարող են արագ փոփոխել այն՝ առանց ինքնաձիգը վերալիցքավորելու։
Բովանդակությունը
Ինքնաձիգից հրաձգության կանոնները։ Ինքնաձիգի հնարավոր խափանումները հրաձգության ժամանակ և դրանց վերացման եղանակները։ Ինքնաձիգի փամփշտատուփի դատարկման ահազանգումը և արագ փոփոխումը մարտի ընթացքում։

Գործնական աշխատանքներ	Ընդհանրական գաղափարներ
Տրվում է առաջադրանք՝ ինքնաձիգի պայմանական խափանում և առաջարկվում է վերացնել այն։ Ցուցադրվում է լուսածիր գնդակներով վերջին 3 փամփուշտի լիցքավորման ճանապարհով փամփշտատուփի ահազանգումը,	Պատկերացումներ-գիտելիքներ-կարողություններ-

հաշվարկվում է վերջին փամփուշտի տեղը, արագ փոխվում է փամփշտատուփը՝ դատարկ փամփշտատուփը նետելով հատուկ գրպանիկ։	հմտություններ, Կանոն, Անընդհատություն, շարունակականություն։ Անվտանգություն։
Միջառարկայական կապեր	
Ֆիզկուլտուրա։ Ֆիզիկական որակներ՝ ուժ, արագություն, ճկնություն, դիմացկունություն, հավասարակշռության զգացողություն և շարժումների կոորդինացիա։ նախավարժանք, ճիշտ (<փորով>) շնչառություն, շնչառական վարժանքներ։ Կենսաբանություն։ Մարմնակազմություն՝ հենաշարժողական համակարգ, մկանային համակարգ, ջլեր։ Շնչառական համակարգ, շնչառություն ստոծանիով (<փորով>)։ Հավասարակշռության և շարժումների կոորդինացիան կազմակերպող օրգաններ. ներքին ականջ և ուղեղիկ։ Ֆիզիկա։ Հավասարակշռություն, ծանրության կենտրոն, կայունություն, պտտական շարժում, պտտման առանցք, գլորում, իներցիա, հետհարված։	
Կապը Հանրակրթության Չափորոշչի Ավագ Դպրոցի Վերջնարդյունքների հետ	
5,6,33,39,46,47,48	
ԹԵՄԱ 4.2.	
Ձեռքի բեկորային նռնակներ (2 ժամ)	
Նպատակը	

Իմանալ ձեռքի բեկորային Ф-1, РГД-5, Ջ-1 նռնակների յուրաքանչյուրի նշանակությունը, ծանոթ լինել դրանց կառուցվածքին, հստակ իմանալ դրանց մարտավարական-տեխնիկական պարամետրերը, պատկերացնել դրանց անվտանգության մակարդակները և վստահ լինել դրանց կիրառման մեջ։ Տիրապետել ձեռքի բեկորային նռնակի նետման տեխնիկային տեղում կանգնած դրությունից:
Վերջնարդյունքները
Գիտեն ձեռքի բեկորային Ф-1, РГД-5, Ջ-1 նռնակների յուրաքանչյուրի նշանակությունը, ծանոթ են դրանց իրանի և բոցավառիչի ներքին կառուցվածքին և աշխատանքնին, կարող են ներկայացնել դրանց մարտավարական-տեխնիկական պարամետրերը, կարող են ցուցադրել դրանց անվտանգության 5 մակարդակները։ Կարողանում են տեղում կանգնած դրությունից ձեռքի ուսումնական բեկորային նռնակը ճիշտ նետել:
Բովանդակությունը
Ձեռքի բեկորային Ф-1, РГД-5, Ջ-1 նռնակների նշանակությունը, կառուցվածքը, մարտավարական-տեխնիկական պարամետրերը, անվտանգության մակարդակները։ Ձեռքի բեկորային նռնակի նետման տեխնիկան:

Գործնական աշխատանքներ	Ընդհանրական գաղափարներ
Քանդել-հավաքել ձեռքի ուսումնական նռնակը, ցուցադրել դրա անվտանգության 5 մակարդակները, բացատրել դրա բոցավառիչի աշխատանքը։ Ցուցադրել նռնակի նետման ճիշտ տեխնիկան։	Պատկերացումներ-գիտելիքներ-կարողություններ-

	հմտություն ներ, <Գրպանի հրետանի>, Անընդհատ ություն, շարունակա կանություն։ Անվտանգու թյուն։
Միջառարկայական կապեր	
Ֆիզկուլտուրա։ Ֆիզիկական որակներ՝ ուժ, արագություն, ճկնություն, դիմացկունություն, հավասարակշռության զգացողություն և շարժումների կոորդինացիա։ նախավարժանք, ճիշտ (<փորով>) շնչառություն, շնչառական վարժանքներ, նռնակի նետում։ Կենսաբանություն։ Մարմնակազմություն՝ հենաշարժողական համակարգ, մկանային համակարգ, ջլեր։ Շնչառական համակարգ, շնչառություն ստոծանիով (<փորով>)։ Հավասարակշռության և շարժումների կոորդինացիան կազմակերպող օրգաններ. ներքին ականջ և ուղեղիկ։ Ֆիզիկա։ Հավասարակշռություն, ծանրության կենտրոն, կայունություն, պտտական շարժում, պտտման առանցք, գլորում, իներցիա, անկյան տակ նետված մարմնի շարժումը, հետագիծ։	
Կապը Հանրակրթության Չափորոշչի Ավագ Դպրոցի Վերջնարդյունքների հետ	
5,6,33,39,46,47,48	

Եզրակացություն

Հիմնական դպրոցներում «Նախնական զինվորական պատրաստություն» առարկան դասավանդվում է 8-9 դասարաններում: Գիտելիքների ու գործնական հմտությունների զարգացմանը միտված Հրազդանի թիվ 2 հիմնական դպրոցում հաճախ կազմակերպվում են միջոցառումներ, բաց դասեր և զրույցներ:

Նախնական զինվորական պատրաստություն առարկան չափազանց կարևոր է ապագա զինվորներ, հայրենիքի պաշտպաններ կրթելու, դաստիարակելու գործում, ուստի մեկ դասաժամը բավարար չէ նրանց փոխանցելու ռազմական գործի այն սկզբնական հմտություններն ու գիտելիքները, որոնք նրանց ծառայության ժամանակ շատ են պետք գալու: Հավատացնում եմ՝ աշակերտները՝ տղա թե աղջիկ, անհամբեր, սրտատրոփ սպասում են, թե շաբաթվա այդ մեկ օրը երբ է գալու: Ասեմ, որ պատանիների շրջանում առարկայի հանդեպ հետաքրքրությունը մեծ է, և իմ ձեռքի տակ անհրաժեշտ ամեն բան կա առարկայի ուսուցանումը առավել հետաքրքիր դարձնելու համար: Խիստ կարևորում եմ զինղեկի զինվորական համազգեստով դպրոց մտնելը: Զինվորական համազգեստը պարտավորեցնող է և հարգանք է ներշնչում…

Հետազոտությանս մեջ ներկայացրել եմ,թե ինչպիսին պետք է լինի կրակային պատրաստության ուսուցումը,թե ինչ հիմնախնդիրներ են դրված ուսուցչի առաջ ,ինչ նպատակներ պետք է հետապնդի կրակային պատրաստության խնդիրները լուծելու համար,ինչ առարկաների հետ պետք է ապահովվի միջառարկայական կապը և սովորողների նկատմամբ ինչ պահանջներ պետք է ներկայացվի:Այս ամենը ուսումնասիրել եմ ՆԶՊ առարկայի և հանրակրթական չափորոշչից,ինչպես նաև հաշվի եմ առել մեր դպրոցի առանձնահատկությունները և երկրի ռազմաաշխարհագրական իրավիճակը:ՈՒսումնական հաստատություններում աշակերտները կրակային պատրաստության գործնական դասեր պետք է հնարավորինս շատ անցկացնեն: 44-օրյա պատերազմը եկավ ապացուցելու,որ մարտական գործողություններին մասնակցում են նաև նորակոչիկները, ովքեր եթե դպրոցում չտիրապետեն կրակային պատրաստությանը,չիմանան դիպուկ կրակել ,ապա մարտի ժամանակ հաջողել չեն կարող:

ՆԶՊ առարկայի մյուս ուսումնական նյութերը ևս ունեն իրենց կիրառական նշանակությունը,սակայն մեծ է կրակային պատրաստության դերը հենց վերը նշված պատճառով։ Հետազոտությանս մեջ նշված դասերի անցկացման օրինակելի ձևերը լավագույնս կիրառելու, ՆԶՊ առարկայի ուսուցման որակը բարձրացնելու տեսանկյունից կարևոր է հատկապես նյութատեխնիկական հագեցվածության համար անհրաժեշտ է գույքի մշտական ավելացում և ուսուցիչները պետք է մշտապես սկզբունքայնորեն պահանջեն և ստեղծեն նոր գույք դիդակտիկ նյութեր,թիրախներ և այլն։Կարևոր է նաև ուսուցչի ինքնուսուցման և ստեղծագործական ներուժի առկայությունը,առանց դրա հնարավոր չի լինի կիրառության մեջ դնել հետազոտությանս մեջ ներկայացված դասերի կազմակերպումը։

Օգտագործված գրականություն

1.«Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի փորձնական չափորոշիչ և ծրագրեր (8-12 դասարաններ)

2. Դասագիրք «Նախնական զինվորական պատրաստություն» 8-րդ դասարան

3.Դասագիրք «Նախնական զինվորական պատրաստություն» 9-րդ դասարան

Հավելված